

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
ապրիլի 13-ի նիստի N 15
արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԴՐՈՂԻ (ՆԵՐՄՈՒԾՈՂԻ) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ

I. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից:

II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հայեցակարգը մշակված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի նիստի N 47 արձանագրության 11-րդ կետով հավանության արժանացած «Բնապահպանության ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների ստեղծման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածի 6-րդ միջոցառման կատարման շրջանակներում:

3. Հայեցակարգում շարադրվում են շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրատեսակների (ապրանքատեսակների) էկոլոգիապես արդյունավետ օգտահանման և (կամ) վնասազերծման քաղաքականության առաջնահերթություններն ու հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները և մեխանիզմները:

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

4. Հայաստանի Հանրապետությունում արտադրական և սպառման թափոնների անվտանգ կառավարման ապահովումը հանդիսանում է բնապահպանական կարևորագույն խնդիրներից մեկը:

5. Հաշվի առնելով կայուն զարգացման գործընթացում և մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության գործում թափոնների անվտանգ կառավարման ապահովման կարևոր դերը՝ Հայաստանի Հանրապետությունում շարունակվում է թափոնների կառավարման հարցերի իրավական հենքի ձևավորումը, սահմանվել են հիմնական ուղղություններն ու ռազմավարական մոտեցումները, ի հայտ են բերվել տվյալ ոլորտում ազգային գերակայությունները:

6. Թափոնների կառավարման հարցերի կարգավորման նպատակով ստեղծվել է օրենսդրական հենք, ներառյալ՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և դրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր (Հայաստանի

Հանրապետության կառավարության որոշումներ, գերատեսչական հրամաններ): Այդ իրավական ակտերի պահանջների կատարման և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է՝

- 1) թափոնների պետական հաշվառում,
- 2) վտանգավոր թափոնների անձնագրավորում,
- 3) թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և թափոնների հեռացման վայրերի գրանցում,
- 4) թափոնների պետական կադաստրի ստեղծման աշխատանքներ:

7. Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության համար շարունակում են արդիական մնալ վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները, քանի որ դեռևս լուծված չեն այդ թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասազերծման և ոչնչացման հարցերը: Հանրապետությունում խիստ սակավաթիվ են թափոններ վերամշակող կազմակերպությունները, բացակայում են դրանց վնասազերծման և թաղման մասնագիտացված պոլիգոնները: Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ներդնել մաքուր տեխնոլոգիաներ, որոնք քիչ աղտոտող են, թույլ են տալիս առավել արդյունավետ օգտագործել բոլոր պաշարները, վերաշրջանառել հնարավորինս շատ թափոններ և արտադրանք: Հայաստանի Հանրապետությունում առաջացող թափոնները հիմնականում կուտակվում են կազմակերպություններում կամ տեղափոխվում են աղբավայրեր, որտեղ կուտակվելով՝ թափոնները հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրները:

8. Միևնույն ժամանակ թափոններում պարունակվում են արժեքավոր բաղադրիչներ, որոնց կորզումն ու օգտահանումը թույլ են տալիս ոչ միայն վնասազերծել թափոններն, այլև ապահովել առաջնային հումքի տնտեսում և արտադրություն:

9. Նշված հիմնախնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 6-րդ կետով հավանության արժանացած «Մաքուր արտադրության» հայեցակարգը, որը կնպաստի քիմիական նյութերի և թափոնների անվտանգ կառավարմանը, էկոլոգիապես մաքուր արտադրության ներդրմանը, աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության խնդրի համալիր լուծմանը, ինչպես նաև արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

10. Հայաստանի Հանրապետությունում 1999 թվականից որպես ֆիսկալ տնտեսական գործիք բավականին հաջող գործում է շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և ներմուծման համար բնապահպանական վճարի գանձման համակարգը: Սակայն պետք է նշել, որ խնդրո առարկա բնապահպանական վճարների գումարները հասցեական օգտագործում չեն ստանում, չեն նպաստում վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրների (թափոնների օգտահանման, էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասազերծման և ոչնչացման հարցերի) լուծմանը:

11. Վերը նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է նոր (միջազգային լավագույն փորձի վրա հիմնված) մոտեցումների կիրառում, որոնցից է հանդիսանում շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրատեսակների (ապրանքների) համար

արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (այսուհետ՝ ԱՊԸ) համակարգը:

IV. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12. ԱՊԸ համակարգի հիմքում ընկած է կառավարման ռազմավարություն, համաձայն որի արտադրողը (կամ ապրանք ներմուծողը) գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքի) արտադրության (կամ ներմուծման) նախնական փուլում նախատեսում է այդ արտադրանքի (ապրանքի) օգտագործման վերջնական փուլում առաջացող բնապահպանական հետևանքները կանխարգելող (կամ դրանց բացասական ներգործությունները վնասազերծող) միջոցառումներ, վարչական և ֆինանսական պատասխանատվություն է կրում այդ բացասական հետևանքների վերացման համար: ԱՊԸ համակարգի հիմնական նպատակն է արդեն իսկ առաջացած թափոնների ծավալների կրճատումը՝ դրանց վերամշակման/վնասազերծման կամ ոչնչացման միջոցով, ինչը կբացառի դրանց տեղադրումն աղբավայրերում, բարձրացնել արտադրանքի օգտագործման/վերամշակման մակարդակը ի հաշիվ դրանք արտադրողի (ներմուծողի) ֆինանսական միջոցներով և ենթակառուցվածքների օգտագործմամբ նրանց կողմից արտադրվող (ներմուծվող) շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գործածությունից դուրս գալուց (թափոն դառնալուց) հետո դրանց պարտադիր հավաքագրման, օգտահանման (կրկնակի օգտագործում, վերամշակում) միջոցով:

13. 1990-ական թվականներին շատ երկրներում արագ տարածում գտան ԱՊԸ համակարգերը: Ինչպես ցույց են տալիս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀՀԿ) դիտարկումները՝ 1990 թվականին ՏՀՀԿ տարածքում հաշվառվում էր ԱՊԸ քաղաքականության տարրերով գործող մոտ 20 օրինակ: 2000 թվականին դրանց թիվն աճել է՝ հասնելով մինչև 100-ի, իսկ ներկայումս գործում է ավելի քան 350 նմանատիպ համակարգ: ԱՊԸ համակարգերի մեծամասնությունը վերաբերում է հատուկ կամ ընտրված շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքային (ապրանքային) խմբերին: Երկրների մեծ մասում գործում են մեկից ավելի համակարգեր, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է ապրանքների առանձին խմբեր: Համակարգերի կեսից ավելին ընդգրկում է ապրանքների երկու խումբ՝ էլեկտրոնային ապրանքներ (35%) և փաթեթավորման նյութեր (17%): Մնացած համակարգերի մեծ մասը վերաբերում է ավտոտրանսպորտային միջոցներին կամ դրանց տարբեր մասերին՝ ինչպիսիք են անվադողերը և մարտկոցները: Եվրամիության (ԵՄ) երկրներում ԱՊԸ սկզբունքներն ամրագրված են թվով չորս՝ փաթեթավորման նյութերի, մարտկոցների, էլեկտրական և էլեկտրոնային ապրանքների թափոնների, շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցների վերաբերյալ դիրեկտիվներում:

V. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

14. Հայաստանի Հանրապետությունում գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) օգտահանման խնդիրը շարունակում է մնալ բնապահպանական գլխավոր մարտահրավերներից մեկը: Սպառման թափոնների ոլորտում գործող կազմակերպությունների ճնշող մեծամասնության մոտ

սովորաբար չեն բավականացնում շրջանառու միջոցները առաջատար տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման, ժամանակակից վերամշակող հզորությունների շինարարության, հեռավոր և քիչ բնակեցված շրջաններից երկրորդային հումքի տեղափոխման համար, իսկ իշխանության տեղական մարմինների մոտ՝ թափոնների առանձնացված հավաքման, բնակչության էկոլոգիական իրազեկման ծրագրերի մշակման և իրականացման համար:

15. Ներկայումս Հայաստանում գործում են գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գծով թափոնների վերամշակում, հավաքում, պահում իրականացնող լիցենզավորված 10 կազմակերպություն, որոնցից 3-ը՝ բժշկական թափոնների, 2-ը՝ մոլիբդեն պարունակող թափոնների, 1-ը՝ թռչնաղբի, 2-ը՝ բանեցված անվադողերի և 2-ը՝ օգտագործված կապարային կուտակիչների (կապարաթթվային մարտկոցների) օգտահանմամբ:

16. Խնդրո առարկա ոլորտի հիմնական խնդիրներից են՝

1) Գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գծով թափոնների հավաքագրման գործընթացները կանոնակարգված չեն պետության կողմից, ներկա պահի դրությամբ այդ գործառույթներով զբաղվում են դրանք օգտահանող (վերամշակող) սակավաթիվ ընկերությունները, որոնք գործընթացում հանդիպում են զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ կազմակերպչական, ֆինանսական և այլ խնդիրների:

2) Հայաստանի Հանրապետությունում 1999 թվականից գործող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և ներմուծման համար բնապահպանական վճարի գանձման համակարգը հասցեական օգտագործման մեխանիզմների (տնտեսական և ֆինանսական գործիքների) բացակայության պայմաններում չի նպաստում վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրների (թափոնների օգտահանման, էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասագերծման և ոչնչացման հարցերի) լուծմանը:

3) Գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գծով թափոնների հավաքագրման և օգտահանման գործընթացները բիզնեսի համար գրավիչ չեն, պետության կողմից բավարար քայլեր (խթանող միջոցներ) չեն իրականացվում գործունեության այդ տեսակը գործարար միջավայրի առումով ավելի գրավիչ դարձնելու տեսանկյունից:

17. Առկա խնդիրները բարդանում են այն առումով, որ Հայաստանի տնտեսության զարգացմանը զուգընթաց աճում են շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) արտադրության (ներմուծման) ծավալները:

VI. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

18. Միջազգային փորձ: Առաջին ԵՄ դիրեկտիվը, որտեղ արտացոլվեցին ԱՊԸ սկզբունքները, դա «Փաթեթավորման մասին» ԵՄ (94/62/ԵՄ՝ 2004/12/ԵՄ խմբագրությամբ) դիրեկտիվն էր, որով ԵՄ անդամ պետությունները պարտավորվեցին ստեղծել փաթեթավորումից առաջացած թափոնների վերադարձի և կրկնակի օգտագործման համակարգեր: Սույն հրահանգը մեծամասամբ հիմնված է 1991 թվականի Գերմանիայի

Դաշնության «Փաթեթավորման մասին» հրամանագրի նորարարական փորձի վրա, որով մանրածախ խանութներին և արտադրողներին պարտավորեցրին հետ ընդունել ապրանքների փաթեթները և ապահովել փաթեթավորման տարբեր նյութերի վերադարձման ու կրկնակի օգտագործման նպատակային ցուցանիշները: Գերմանական այդ մոդելի տարրերը, մասնավորապես, ԱՊԸ գործունեության պատասխանատվությունը մեկ կամ մի քանի Արտադրողների պատասխանատվության կազմակերպության (այսուհետ՝ ԱՊԿ) վրա դնելով՝ դրանց ֆինանսավորումն իրականացնելով ԱՊԸ համակարգի մասնակից ընկերությունների շրջանառությանը համապատասխան գանձվող վճարումների հաշվին, ներառվել են ԵՄ-ում կիրառվող ԱՊԸ շատ համակարգերում: Համանման արդյունքներ ստանալու համար որոշ անդամ երկրներում կիրառում են այլընտրանքային մեխանիզմներ՝ Մեծ Բրիտանիայում գործում է կրկնակի օգտագործման քվոտային համակարգը, իսկ Դանիայում, Հունգարիայում և Նիդերլանդներում արտադրողի կողմից ֆինանսավորվող ԱՊԸ փոխարեն կիրառվում են հարկերի և գրավի վերադարձման համակարգերը (ԵՄ, 2012):

19. Կուտակային մարտկոցների տեսակավորված վերադարձը թափոնների կառավարման քաղաքականության գերակայություններից է՝ պայմանավորված թաղման կամ այրման ենթակա թափոնների հոսքում դրանց ընդգրկելու դեպքում շրջակա միջավայրին պատճառվող պոտենցիալ վնասների մեծ չափով: Մարտկոցների և կուտակիչների վերաբերյալ ԵՄ-ի (2006/66/ԵՄ) դիրեկտիվը պարտավորեցնում է ԵՄ անդամ պետություններին քայլեր ձեռնարկել օգտագործված մարտկոցները և ավտոմոբիլային մարտկոցներն առանձին հավաքելու ուղղությամբ՝ արտադրողների ու ներմուծողների վրա դնելով դրանց հավաքագրման և կրկնակի օգտագործման ծախսերը փոխհատուցելու պարտավորությունը՝ նրանց շուկայական մասնաբաժնին համամասնորեն: ԵՄ անդամ պետություններում ներկայումս կուտակային մարտկոցների նկատմամբ մեծ մասամբ գործում են ԱՊԸ համակարգերը:

20. Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների ԵՄ (2002/96/ԵՄ) դիրեկտիվը պարտավորեցնում է էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ արտադրողներին և ներմուծողներին սպառողների համար ստեղծել 2005 թվականից հետո վաճառված ապրանքների հավաքագրման և կրկնակի օգտագործման անվճար մեխանիզմներ: Բացի այդ, սույն դիրեկտիվով սահմանվում են էլեկտրական ապրանքների քաշի հետ կապված դրանց վերադարձի և կրկնակի օգտագործման նպատակային ցուցանիշները: Մասնավորապես՝ օգտագործված էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների (այսուհետ՝ ԷԷՍԹ) վերադարձի մակարդակի տարեկան նվազագույն նպատակային ցուցանիշը 2009 թվականին մեկ շնչի հաշվով սահմանված էր 4 կգ: ԵՄ անդամ երկրների մեծ մասն ապահովել է սույն դիրեկտիվի պահանջները՝ ստեղծելով մեխանիզմներ, համաձայն որոնց ԷԷՍԹ վերադարձման համակարգը 2005 թվականից հետո վաճառված ապրանքների համար ֆինանսավորվում է արտադրողի հաշվին, իսկ մինչև 2005 թվականը վաճառված ապրանքների համար վերադարձի և թափոնների կրկնակի օգտագործման ֆինանսավորման մեխանիզմները տարբերվում են: ԷԷՍԹ-ի նոր (2012/19/ԵՄ) դիրեկտիվով սահմանվել են հավաքագրման և կրկնակի օգտագործման ավելի բարձր նպատակային ցուցանիշներ (85%), ինչպես նաև ԵՄ անդամ

պետություններին վերապահվել են թափոնների ապօրինի արտահանման դեմ պայքարի համապատասխան իրավասություններ:

21. Շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցների վերաբերյալ ԵՄ (2000/53/ԵՄ) դիրեկտիվը պարտավորեցնում է ԵՄ անդամ պետություններին ներդնել շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցների (ՇԴԵՏՄ) ԱՊԸ սկզբունքների վրա հիմնված վերադարձի և կրկնակի օգտագործման մեխանիզմներ: ԵՄ անդամ երկրներում այդ համակարգերի մեծամասնությունը ֆինանսավորվում է արտադրողների անդամավճարների հաշվին՝ առանց ՇԴԵՏՄ օգտահանող սպառողներից կատարվող գանձումների, չնայած որոշ երկրներում տրանսպորտային միջոցների վաճառքից գոյացած և դրանց տիրապետման համար գանձվող մուտքերն իրենց ներդրումն ունեն դրանց վերադարձի և կրկնակի օգտագործման ֆինանսավորման մեջ:

22. ԵՄ-ից դուրս գոյություն ունեն ԱՊԸ համակարգերի կիրառման բազմաթիվ այլ տարբեր օրինակներ: Մասնավորապես՝ **ԱՄՆ-ում, Կանադայում և Ճապոնիայում** սկզբունքորեն ԱՊԸ-ն կարող է ընդգրկել ապրանքների ավելի լայն շրջանակ՝ ներառելով օգտագործված շարժիչային յուղեր, գորգեր և այլն: Կանադայում և ԱՄՆ-ում, ընդունելով համապատասխան օրենսդրություն կամ արդյունաբերության ոլորտի շրջանակներում կամավոր համաձայնագրեր, ներդրվել են տարբեր ԱՊԸ համակարգեր (կամ դրանց հետ կապված «ապրանքի գիտակից կառավարման» հայեցակարգ), հիմնականում նահանգների մակարդակով: Կանադայի որոշ նահանգներում ԱՊԸ շրջանակում ընդգրկված ապրանքների մեջ մտնում են օգտագործված անվադողերը, խմիչքների բեռնարկղերը, օգտագործված յուղը, ավտոմոբիլային մարտկոցները, էլեկտրոնային ապրանքների թափոնները, դեղագործական արտադրանքը, ներկերը, սնդիկային թերմոստատները և լամպերը, փաթեթավորման և տպագիր նյութերը: Համազգային մակարդակում ԱՊԸ համակարգերը վերաբերում են մարտկոցներին, օգոնաքայքայիչ նյութերին, ժամկետանց թունաքիմիկատներին և դրանց համար նախատեսված տարաներին: Այս համակարգերը, որպես կանոն, ունեն կոնկրետ ուղղվածություն և նախատեսում են գործառույթների բաշխման հստակ և հասկանալի մեխանիզմներ:

23. Հետաքրքիր օրինակ է հանդիսանում Ճապոնական ԱՊԸ համակարգը, որն իրենից ներկայացնում է կառավարության, կազմակերպությունների և սպառողների համատեղ ծախսերի պատասխանատվության համակարգ: Օգտագործված ապրանքների հավաքն իրականացվում է մանրածախ խանութների միջոցով, կրկնակի օգտագործումը՝ արտադրողների: Այս համակարգը խրախուսում է մրցակից կազմակերպությունների միավորումը (օրինակ, տրանսպորտային միջոցների և կենցաղային սարքեր արտադրողների միավորման ստեղծումը) կրկնակի օգտագործման և հետազոտությունների անցկացման իրագործման համար, որն ուղղված է թափոնների կառավարման երկարաժամկետ ծախսերի նվազեցմանը: Սպառողներից թափոնների օգտահանման պահին գանձվում է որոշակի գումար, որով փոխհատուցվում են թափոնների հավաքագրման, տեղափոխման և կրկնակի օգտագործման ծախսերը: Թափոնների յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանվում են վերադարձի նպատակային ցուցանիշներ, որոնք սովորաբար գործնականում գերակատարվում են:

24. Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ԱՊԸ համակարգերի հիմքում ընկած ԱՊԿ-ի կազմակերպման և ֆինանսավորման պրակտիկան էականորեն տարբերվում է: ԵՄ

երկրներում ԱՊԿ-ները, որպես կանոն, ղեկավարում են կազմակերպությունները, որոնք հաճախ ստեղծվում են ոլորտային ասոցիացիաների հովանու ներքո: Վերջին տարիներին մի քանի երկրների կողմից դիտվում է մեկ տեսակի ապրանքի թափոններով զբաղվող մի քանի ԱՊԿ-ների զարգացումը խրախուսելու միտում, որի նպատակն է մրցակցության միջոցով ԱՊԿ-ների գործունեության արդյունավետության բարձրացումը:

25. Փաթեթավորման ոլորտում ԱՊԸ համակարգի կիրառումը Գերմանիայում:

Համակարգը, որը ներդրվել է 1991 թվականին, գործում է միայն կենցաղային ապրանքների փաթեթավորման նկատմամբ (ապակե, մետաղյա, ալյումինե և թղթե/ստվարաթղթե), իսկ ընպելիքների մեկանգամյա օգտագործման տարայի համար գործում է առանձին համակարգ: 2003 թվականից շուկայում փաթեթավորում իրականացնող ընկերությունները կարող են ընտրել ԱՊԿ-ներից մեկը: Արտադրողները կատարում են վճարումներ ԱՊԿ-ին՝ ելնելով իրենց կողմից օգտագործվող փաթեթների ծավալից, իսկ ԱՊԿ-ը վճարում է փաթեթների հավաքագրման, վերադարձման և կրկնակի օգտագործման համար, ինչպես նաև համայնքային տարածքների օգտագործման համար, որտեղ իրականացվում է փաթեթների հավաքումը: 2011 թվականին կենցաղային փաթեթների վերադարձը կազմել է 80%, կրկնակի օգտագործումը՝ 75%: Այս համակարգը շատ հայտնի է սպառողների շրջանում շնորհիվ իր հարմարավետ ենթակառուցվածքների, ակտիվ էկոկրթական միջոցառումների և բնակչության համար ֆինանսական խթանների, որոնք կրճատում են թափոնների հավաքագրման համար վճարվող գումարները՝ նվազեցնելով թափոնների ծավալը:

26. Փաթեթավորման ոլորտում ԱՊԸ համակարգը Մեծ Բրիտանիայում:

Համակարգը, որը ներդրվել է 1997 թվականին, արտադրողներից պահանջում է փաթեթավորումից առաջացող թափոնների մի մասի վերադարձ և կրկնակի օգտագործում, որի հիման վրա սահմանվում են յուրաքանչյուր կազմակերպության համար նպատակային ցուցանիշներ: Կազմակերպությունները կարող են հասնել իրենց նպատակային ցուցանիշին՝ գործելով ինքնուրույն կամ միանալով որևէ մեկ այլ գրանցված/գործող կազմակերպությանը, որն ինքնուրույն իրականացնում է օգտագործված փաթեթավորման նյութերից առաջացած թափոնների հավաքագրում և կրկնակի օգտագործում՝ իր անդամների անունից: Պահանջների կատարման համապատասխանությունը հաստատվում է «փաթեթավորման նյութերից առաջացած թափոնների վերամշակման հավաստագրերի» միջոցով՝ ըստ օգտահանված փաթեթավորման նյութերի յուրաքանչյուր տոննայի: Հավաստագրերը կարելի է վաճառել, ինչը թույլ է տալիս կազմակերպություններին հասնել նպատակային ցուցանիշներին անհատական կամ կոլեկտիվ ձևով՝ իրագործելով հավաքագրում և վերամշակում ինքնուրույն, կամ գնելով հավաստագրերը կազմակերպություններից, որոնք գերակատարել են իրենց պարտավորությունները: Փաթեթավորման նյութերից առաջացած թափոնների կրկնակի օգտագործման ընդհանուր մակարդակը 2011 թվականին կազմել է 62%:

27. Փաթեթավորման ոլորտի ԱՊԸ համակարգը Չեխիայում:

«ԷԿՈ-ԿՈՄ» ընկերությունը ԱՊԿ է փաթեթավորման թափոնների համար, թեև արտադրողները կարող են ընտրել անհատական պատասխանատվության մեխանիզմը:

«ԷԿՈ-ԿՈՄ» ընկերությունը արտադրողներից գանձում է փաթեթների մեկ տոննայի համար 20 եվրոյի չափով գումար, փոխհատուցում է տեղական իշխանություններին՝ կենցաղային փաթեթավորման թափոնների հավաքագրման ծախսերի համար և վարձում է թափոնների կառավարման ընկերություններ՝ պատշաճ վերամշակման և հավաքագրված փաթեթավորման նյութերից առաջացած թափոնների կրկնակի օգտագործման համար: Արդյունաբերական արտադրանքի փաթեթավորման նյութերից առաջացած թափոնների հավաքագրման և վերամշակման համար պատասխանատու են արտադրողները: Կրկնակի օգտագործման նպատակային ցուցանիշները տարբերակված են ըստ նյութերի (օրինակ՝ ապակու - 70%, պոլիէթիլենի - 37%) և յուրաքանչյուր տարի այդ ցուցանիշներն աճում են: 2012 թվականին փաթեթավորման նյութերից առաջացած թափոնների հավաքի ընդհանուր մակարդակը կազմել էր 91%, իսկ վերամշակման մակարդակը՝ 71%:

28. ԱՊԸ համակարգն Ավստրիայում՝ կապված մարտկոցների հետ: Դյուրակիր մարտկոցների ընդունման և վերամշակման կազմակերպման համար պատասխանատու են չորս ԱՊԿ (մեկ առևտրային և երեք ոչ առևտրային), և բոլորն էլ էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների (ԷԷՍԹ) կառավարման համակարգի մասնակից են: Հինգերորդ ԱՊԿ-ն զբաղվում է միայն ավտոմեքենաների մարտկոցներով: ԱՊԿ մասնակից (անդամ) չհանդիսացող արտադրողը, կարող է տուգանվել ԱՊԿ-ին վճարվող անդամավճարը գերազանցող գումարի չափով: Այդ մարտկոցները կարելի է հանձնել ընդունման վարչական կետերում և դրանց վաճառքի վայրերում: Մարտկոցների հավաքագրման մակարդակը կազմել է մոտ 50%:

29. ԱՊԸ համակարգը Շվեդիայում՝ կապված ԷԷՍԹ-ի հետ:

ԷԷՍԹ-ի հավաքագրումը ապահովվում է երկու համակարգի միջոցով՝

1) պայմանագրի կնքում շվեդական տեղական իշխանությունների և «El-Kretsen» էլեկտրոնային ապրանքների արտադրողների ընկերության միջև՝ համաձայն որի էլեկտրական ապրանքների թափոնների հավաքագրման համար բոլոր ծախսերը կրում են քաղաքապետարանները, իսկ «El-Kretsen» ընկերությունը՝ դրանց վերամշակման և կրկնակի օգտագործման համար կատարվող ծախսերը,

2) էլեկտրոնային ապրանքների վերամշակմամբ զբաղվող մասնակցային համակարգ, որն իրականացնում է թափոնների հավաքագրում Ասոցիացիայի անդամ հանդիսացող խանութների միջոցով: Որոշ արտադրողներ ստեղծել են ինքնուրույն համակարգեր: ԱՊԿ մասնակից (անդամ) հանդիսացող արտադրողները կատարում են տարեկան վճարումներ՝ ելնելով ապրանքների վաճառքի ծավալից և դրանց կրկնակի օգտագործման արժեքից:

30. ԱՊԸ համակարգը Կանադայում՝ կապված օգտագործված յուղերի հետ:

Օգտագործված յուղի հետ կապված Արևմտյան Կանադայի ծրագիրը, որը գործում է չորս նահանգներում, ԱՊԸ համակարգի միջոցով ապահովում է օգտագործված շարժիչային յուղերի անվտանգ հեռացումը, ինչն իր հերթին կանխարգելում է վնասակար արտանետումները (արտահոսքերը) կոյուղի, ջրահոսքերի և ստորերկրյա ջրերի մեջ: Յուղերի վաճառքը և ներմուծումը հարկվում են «բնապահպանական վճարներով», որն հետագայում վճարվում է յուղեր հավաքագրող հավատարմագրված կազմակերպություններին՝ մեկ միավոր հավաքագրված և վերամշակված յուղի համար: Այս համակարգում շատ ընդհանրություններ կան ավանդական ԳՎՀ-ի (գրավի վերադարձման համակարգի) հետ, բացառությամբ այն բանի, որ գրավը վերադարձվում է ոչ թե

սպառողներին, այլ որպես խթան այն կազմակերպություններին՝ որոնք հավաքագրում են օգտագործված յուղերը:

31. ԱՊԸ համակարգը Սլովակիայում՝ կապված շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցների (ՇԴԵՏՄ) հետ:

ՇԴԵՏՄ պետական հիմնադրամը արտադրողներից և ներմուծողներից գանձում է վճար՝ մի շարք ապրանքային խմբերի համար (օրինակ՝ 66,4 եվրո յուրաքանչյուր արտադրված մեքենայի համար) և սուբսիդավորում է հավաքագրումը և վերամշակումը: Սակայն, ռեսուրսների հստակ բաշխում ըստ տարբեր ապրանքային խմբերի չի կատարվում: ՇԴԵՏՄ-ի վերադարձի և կրկնակի օգտագործման մակարդակը 2012 թվականին մոտ 90% էր:

32. Արևելյան գործընկերության երկրներում ԱՊԸ համակարգի ստեղծման նկատմամբ աճում է հետաքրքրությունը: ԱՊԸ վերջերս ներդրվել է Բելառուսում, ԱՊԸ որոշ տարրեր գործում են Ուկրաինայում: Այս համակարգերը ընդգրկում են ապրանքների լայն տեսականի և նախատեսում են միասնական պետական ԱՊԸ-ի ստեղծում, բայց վճարները, որոնք գանձվում են արտադրողներից և ներմուծողներից, ամբողջությամբ չեն փոխհատուցում հավաքի, մշակման և վերամշակման ծախսերը: Արդյունքում՝ առայժմ այդ համակարգերը անարդյունավետ են գործում:

33. ԱՊԸ համակարգերը Արևելյան գործընկերության երկրներում՝ Բելառուս:

ԱՊԸ-ն ներդրվել է 2012 թվականին և ընդգրկում է 17 տեսակի ապրանք (արտադրանք)՝ փաթեթավորման նյութեր, օգտագործված յուղեր, անվադողեր, կենցաղային տեխնիկա, էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներ, էլեկտրական լամպեր, կուտակող մարտկոցներ և այլն: Արտադրողները և ներմուծողները կարող են ստեղծել հավաքագրման, մշակման և վերամշակման իրենց սեփական համակարգը, որոնք պետք է ապահովեն կրկնակի օգտագործման 30% ցուցանիշը՝ փաթեթավորման նյութերի, օգտագործված յուղերի, անվադողերի և մեկանգամյա օգտագործման սպասքի համար և 10%՝ այլ տեսակի ապրանքների համար, որոնք ընդգրկված են ԱՊԸ համակարգում: Հակառակ դեպքում, նրանք պետք է պայմանագիր կնքեն այդ ծառայությունները մատուցող միասնական պետական ոչ առևտրային օպերատորի հետ և կատարեն համապատասխան վճարումներ, որոնք հաշվարկվում են էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների, մարտկոցների, էլեկտրալամպերի և քսանյութերի վաճառքի գնի նկատմամբ՝ տոկոսով կամ ֆիքսված չափով՝ ըստ փաթեթավորման նյութերի (պլաստիկ, սովարաթղթե և ապակե) տեսակի:

34. Ուկրաինա: Փաթեթավորման թափոնների հավաքագրման, վերամշակման և կրկնակի օգտագործման վերաբերյալ 2001 թվականին կառավարության որոշումով ստեղծվել է պետական «ՈւկրէկոՌեսուրս» ընկերությունը, որին վստահված է կառավարման այս համակարգը: Ընկերությունը սահմանում է վճար թղթի, սովարաթղթի, պոլիէթիլենի, ապակու, թիթեղյա և այլումինե փաթեթավորման (մեկ կգ) հավաքագրման և վերամշակման համար, որը պետք է փոխանցվի հատուկ գանձապետական հաշվեհամարին: Գործնականում միայն ներմուծողներն են վճարում «ՈւկրէկոՌեսուրս» ընկերությանը խորհրդանշական վճարը (ինչը չեն անում տեղական արտադրողները), և այդ ընկերության կողմից իրականացվող կրկնակի օգտագործման գործընթացը շատ

սահմանափակ է: Կառավարության որոշումը 2012 թվականին ուղղված էր արդյունաբերության ոլորտի օգտագործված յուղերի հավաքմանը, մշակմանը և օգտահանմանը. դրանով սահմանվում է նույնպիսի պարտավորություն կազմակերպությունների նկատմամբ և նվազագույն վճար՝ 7 եվրոցենտ մեկ լիտրի համար: Դրանով նաև հաստատվել են հավաքման, վերամշակման և օգտագործված յուղերի հեռացման կանոնները և ներդրվել «լիազորված կազմակերպություն» (համակարգը կառավարող պետական մարմին) և «մասնագիտացված կազմակերպություն» (տեխնիկական գործողություններ կատարող) հասկացությունները: Սույն որոշումով սահմանվում է օգտագործված յուղերի կրկնակի օգտագործման 40% պարտադիր նպատակային ցուցանիշ, սակայն այդ համակարգը դեռևս անարդյունավետ է գործում: 2011 թվականին ընդունված ԱՊԸ-ն՝ կապված անվադողերի հետ, նույնպես չի գործում արտադրողների և ներմուծողների համար հին անվադողերի հավաքի, վերամշակման և կրկնակի օգտագործման համապատասխան նորմերի և վճարների բացակայության պատճառով: 2013 թվականին մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ արտադրողների և ներմուծողների համար ներդրվեց օգտահանման վճար, բայց այդ վճարի նպատակային օգտագործման վերաբերյալ նորմատիվային ակտ դեռևս չի ընդունվել: Ըստ օրենքի, տրանսպորտային միջոցների տեղական արտադրողները կարող են չվճարել օգտահանման վճարը, բայց Ոսկրահինայի յուրաքանչյուր տարածաշրջանում և բոլոր քաղաքներում բացվել են 103 ընդունման կետեր, սակայն առանց ՇԴԵՏՄ-ի քանդման, վերամշակման և կրկնակի օգտագործման պարտավորության: Առանց ԱՊԸ այլ հիմնական տարրերի, այս վճարը գործում է որպես հարկ ապրանքի վրա՝ տարբերակված չլինելով ըստ ՇԴԵՏՄ-ի բնապահպանական բնութագրերի:

VII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

35. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հասունացել է գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) օգտահանման նպատակով «Արտադրողի պատասխանատվության ընդլայնման» սկզբունքի ներդրումը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, «Արտադրողի պատասխանատվության ընդլայնման» սկզբունքի չկիրառման դեպքում ֆինանսական բեռը մեծ մասամբ ընկած է կոնկրետ արտադրանքի գնորդի և հիմնականում պետության վրա, որը այնքան էլ ճիշտ չէ: Արտադրողները և ներմուծողները ստանում են իրենց շահույթը և ապրանքների գնման ժամանակ հավաքագրված օգտահանման վճարները, որպես կանոն, վերաբաշխում են թափոնները վերամշակողների միջև:

36. Այդ պատճառով էլ վերամշակող հզորությունների լրիվ ծանրաբեռնման ապահովման համար պետք է միջոցներ առանձնացվեն ոչ միայն վերամշակող կազմակերպությունների համար, այլև այն ընկերությունների համար, որոնք իրականացնում են թափոնների հետ կապված ոչ շահավետ բաղադրիչի հետ կապված գործառույթները (թափոնների հավաքը և մինչև վերամշակման մոտակա կազմակերպություն տեղափոխումը): Հավաք-տեղափոխում-վերամշակում գործընթացում օգտահանման վճարի չափի սահմանման և հիմնավորման հարցը տնտեսության յուրաքանչյուր օղակի տեսանկյունից բարդ է՝ պայմանավորված ինչպես Հայաստանի Հանրապետությունում բնակչության ցածր կենսամակարդակի, այնպես էլ Հայաստանի

Հանրապետության կլիմայական և տարածքային առանձնահատկություններով, ռեսուրսների խնայողության և էկոլոգիական անվտանգության թույլ մշակույթով կամ գործելակերպով:

37. «Արտադրողի պատասխանատվության ընդլայնման» սկզբունքի ներդրման դեպքում գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման գործընթացների իրականացման համար ստեղծվում են բավարար նախադրյալներ, որոնց կիրառման արդյունավետությունն ամրագրված է միջազգային փորձի կիրառման լավագույն օրինակներով:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

38. «Արտադրողի պատասխանատվության ընդլայնման» սկզբունքի ներդրման դեպքում գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման համար արտադրողների (ներմուծողների) համար պատասխանատվության սահմանումն ենթադրում է այդ գործընթացների հստակ ծրագրավորում՝ ելնելով Հայաստանում շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գործածությունից դուրս գալու արդյունքում առաջացած թափոնների վտագավորության աստիճանից, դրանց ծավալներից և հավաքագրման և օգտահանման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կանխատեսվող ծավալներից:

39. Ելնելով թափոնների վտագավորության աստիճանից և դրանց ծավալներից Հայաստանի համար ԱՊԸ համակարգի ներդրման մասով առաջնահերթ են համարվում ներքոհիշյալ արտադրանքի (ապրանքների) գծով թափոնները՝

Շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) անվանումը	2015թ. ՀՀ ներմուծման ծավալը հանած արտահանման ծավալը (տոննա)*	Թափոնների հավաքագրման և օգտահանման մոտավոր գինը 1 տոննայի համար ԱՄՆ դոլարով
Պոլիմերային նյութեր, պլաստմասսաներ և պատրաստի իրեր դրանցից	43 835,0	70,0
Ավտոդողեր	19 075,0	60,0
Մարտկոցներ և էլեկտրական կուտակիչներ (ակումուլյատորներ), դրանց մասեր	2 395,5	7500,0
Շարժիչային, կոմպրեսորաքսուքային, տուրբինաքսուքային հիդրավլիկ նպատակներով օգտագործվող, ռեդուկտորների, էլեկտրական մեկուսիչ և այլ յուղեր	7 443,1	30,0
Սնդիկ պարունակող լամպեր, ջերմաչափիչներ, մարտկոցներ /հատ/	45 072 հատ	1,5 /հատի համար/
Խոշոր չափսերի տեխնիկայի թափոններ	5 695,2	290,0
Միջին չափսերի տեխնիկայի թափոններ	1 676,5	400,0

40. Առաջիկա տարիներին Հայաստանի տնտեսության զարգացմանը զուգընթաց բերված ծավալային ցուցանիշները շարունակելու են աճել, որն իր հերթին բերելու է գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների հավաքագրման և օգտահանման ծավալների համապատասխան աճի:

41. Եթե ելակետային տվյալ ընդունենք վերը նշված աղյուսակում բերված ծավալային ցուցանիշները և ընդունենք, որ 5-10 տարի հետո դրանց ծավալի 50,0-80,0 տոկոսը կդառնա գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոն, ապա ըստ խոշորացված հաշվարկների տարեկան կտրվածքով այդ թափոնների հավաքագրման և օգտահանման համար անհրաժեշտ կլինի 5950,0 – 9520,0 մլն.դրամ:

42. 2014-2016թթ. ժամանակատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել որպես շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական վճար տարեկան միջին հաշվով 3534,8 մլն.դրամ, որն ԱՊԸ համակարգի ներդրման դեպքում պետք է հիմնականում նպատակաուղղվի գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման հետ կապված արտադրողների (ներմուծողների) կողմից իրականացված ծախսերի փոխհատուցմանը: Փոխհատուցման համար անհրաժեշտ գումարների պահանջարկը փակելու համար անհրաժեշտ կլինի վերանայել բնապահպանական վճարների դրույքաչափերը և (կամ) սահմանել նոր երաշխիքային վճարներ գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման համար:

43. Սահմանված չափաքանակների սահմաններում գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման ծավալների ապահովման դեպքում փոխհատուցման համապատասխան և (կամ) համարժեք համակարգի ձևավորման և կիրառման դեպքում արտադրողների (ներմուծողների) մոտ հարկային լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի առաջանա:

44. Միջազգային փորձից և վերը նշված վերլուծությունից ելնելով, տնտեսության վրա ավելորդ կամ լրացուցիչ ծանրաբեռնվածություն չառաջացնելու նպատակով, Հայաստանում ԱՊԸ համակարգի ներդրումը պետք է իրականացվի փուլ առ փուլ, ներդրման ժամանակատվածը ծրագրավորելիս հաշվի առնելով՝
- ԱՊԸ համակարգի ներդրման իրավական հենքի ստեղծման համար անհրաժեշտ ժամանակահատվածը (3 – 5 տարի),

- գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների հավաքագրման և օգտահանման ենթակառուցվածքների ստեղծման կամ վերակառուցման համար անհրաժեշտ ժամանակահատվածը (իրավական հենքի ստեղծումից հետո - 5 տարի),

- գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման հետ կապված արտադրողների (ներմուծողների) կողմից իրականացված ծախսերի փոխհատուցման նպատակով ֆինանսավորման աղբյուրների ձևավորման և ֆինանսական միջոցների հավաքագրման ժամանակահատվածը (իրավական հենքի ստեղծումից հետո - 5 տարի):

45. «Արտադրողի պատասխանատվության ընդլայնման» սկզբունքի ներդրման դեպքում գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքագրման և օգտահանման գործընթացների՝ դրանք արտադրողների (ներմուծողների) համար պատասխանատվության սահմանում ենթադրում է նաև այդ գործընթացների ավելի արդյունավետ կազմակերպում, ինչը ի վերջո հանգեցնում է այդ ոլորտի վրա կատարվող հանրային ծախսերի էական նվազման:

IX. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

46. Գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգի կիրառման հետ կապված միջազգային փորձը և Հայաստանի Հանրապետությունում խնդրո ոլորտում առկա հիմնախնդիրները հաշվի առնելով արձանագրել, որ ԱՊԸ համակարգերի կիրառումը Հայաստանում արդեն իսկ հասունացել է, դրա ներդրումը երկրում կապահովի **«Գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գիտակից կառավարման համակարգի»** ներդրումը, որով կապահովվի ոլորտի գծով առաջացող թափոնների արդյունավետ կառավարումը և օրեցօր աճող բնապահպանական հիմնախնդիրների լուծումը: Այս տեսանկյունից առաջարկվող առաջնահերթ քայլերը պետք է լինեն՝

1) ԱՊԸ համակարգի ներդրման համար օրենսդրական համապատասխան հենքի ստեղծումը, այդ թվում **«Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ընկերությունների համար ԱՊԸ գծով պարտավորությունների ամրագրում և համապատասխան փոփոխությունների կատարում նախատեսող փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի մշակումն ու ընդունումը , ինչպես նաև ԱՊԸ համակարգի սկզբունքների կիրառման համար անհրաժեշտ կլինի համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել նաև գործող օրենքներում և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում նախատեսելով:**

ա. ԱՊԸ համակարգի համար գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների հավաքման տեսակավորված համակարգ,

բ. ԱՊԸ համակարգի կիրառման ոլորտների հստակ սահմանում՝ ըստ ապրանքային խմբերի (ԷԷՍԹ, փաթեթներ, շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցներ և այլն): Ապրանքների մեկից ավելի խմբերի համար ԱՊԸ համակարգի ներդրման դեպքում ԱՊԸ միասնական համակարգված մեխանիզմների ստեղծում,

գ. ԱՊԸ գծով պարտավորություններ կրող հայրենական արտադրողների և ներմուծողների համար պատասխանատվություն կրելու միանման ընթացակարգ նախատեսող հստակ չափորոշիչների սահմանում,

դ. ԱՊԿ կառուցվածքի (նախատեսելով նաև բոլոր մարզերում և խոշոր քաղաքներում և (կամ) համայնքներում դրանց ստեղծման պարտադիր պահանջ) հստակ սահմանում, որի միջոցով ընկերությունները կարող են հավաքական ձևով իրականացնել ԱՊԸ համակարգում ընգրկված գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքման և վերամշակման իրենց պարտավորությունները,

ե. դրույթների ընդունում, որոնք ընկերություններին թույլ կտան չընդգրկվել հավաքական ԱՊԿ-ում և ստեղծել գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքման սեփական մեխանիզմներ՝ պայմանով, որ դրանք կարողանան ապահովել հավաքման և վերամշակման նույն նպատակային ցուցանիշների կատարումը,

զ. իրավական հիմքերի սահմանում, որոնց համաձայն արտադրողները և ներմուծողները պարտավոր են վճարել տարեկան վճարներ՝ ԱՊԿ-ների շահագործման ծախսաձեռնարկի համար: Պետք է սահմանվի պարզ և հստակ բանաձև, որով ԱՊԿ-ների շահագործման ծախսերը բաժանվում են ԱՊԿ անդամ հանդիսացող ընկերությունների թվաքանակի վրա՝ ընկերությունների նախորդ տարվա կտրվածքով համապատասխան ապրանքների արտադրության/ներմուծման ծավալներին համամասնորեն,

է. գործունեությունը դադարեցրած ընկերությունների գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով ֆինանսավորման աղբյուրների, մասնավորապես դրամագլխի, ստեղծման դրույթների նախատեսում,

ը. գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) օգտահանման ծավալների հաշվառման և գրանցման համար համապատասխան հավաստագրերի տրամադրման համակարգերի ներդրում,

թ. հավաքման և վերամշակման նպատակային ցուցանիշների սահմանում, և տարեկան ֆինանսական աուդիտի ու գործունեության արդյունավետության մոնիթորինգի մեխանիզմի մշակում,

ժ. նպատակային ցուցանիշների չկատարման դեպքում ԱՊԿ և դրա անդամ հանդիսացող ընկերությունների վրա դրվող պատժամիջոցների սահմանում: Պատժամիջոցները պետք է սահմանվեն բավականին բարձր մակարդակով, որպեսզի դրանցով ապահովվի պահանջների կատարումը, այդ պատճառով էլ դրանց մակարդակը պետք է գերազանցի ընկերության կողմից պահանջների չկատարման արդյունքում ստացվելիք օգուտների չափը:

ի. փոփոխություններ և լրացումներ կատարել Հարկային նոր օրենսգրքում՝ նախատեսելով՝

- շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) համար գործող բնապահպանական հարկի դրույքաչափերի վերանայում՝ համապատասխանեցնելով դրանց չափերը գործածությունից դուրս գալուց հետո այդ արտադրանքի (ապրանքների) օգտահանման համար անհրաժեշտ ծախսերի մակարդակի հետ,

- սահմանել համապատասխան տնտեսապես հիմնավորված օգտահանման վճարներ,

- նախատեսել դրանց հաշվին ԱՊԿ կազմակերպությունների գործունեության խթանման ֆինանսական մեխանիզմներ,

- գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) հավաքման և օգտահանման սեփական մեխանիզմներ կիրառելու դեպքում օգտահանման համար վճարված վճարների վերադարձման և (կամ) առաջիկա վճարումների հաշվին հաշվանցման մեխանիզմներ:

2) Համակարգի ներդրման և գործարկման գնահատման մասով՝

ա. թափոնների տեսակավորման և դրանց վերադարձման մեխանիզմների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցառումների նախապատրաստում և իրականացում:

բ. ԱՊԿ-ի (կամ եթե դրանք մի քանիսն են, յուրաքանչյուր ԱՊԿ-ի) համար հավաքման և վերամշակման համապատասխան նպատակային ցուցանիշների սահմանում մինչև տվյալ տարվան նախորդող տարվա հոկտեմբերի 1-ը:

գ. թափոնների հավաքում և վերամշակում իրականացնող ԱՊԿ-ների կողմից հավաքված թափոնների, դրանց կրկնակի օգտագործման և վերամշակման ծավալների, շահագործման ծախսերի, երկրորդային հումքի վաճառքից մուտքերի, կազմակերպության անդամ հանդիսացող ընկերությունների կողմից ֆինանսավորվող զուտ շահագործման ծախսերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջի սահմանում: Սույն հաշվետվողականությունը ենթակա է ինչպես ֆինանսական, այնպես էլ էկոլոգիական աուդիտի, որն իրենից ենթադրում է տնտեսական և այլ գործունեություն ծավալող սուբյեկտների կողմից շրջակա միջավայրի պահպանման ոլորտում նորմատիվաիրավական պահանջներին հետևելու անկախ գնահատում:

դ. համակարգի եռամյա գործունեության գնահատման նպատակով հետազոտության իրականացում, մասնավորապես կազմակերպության գործունեության համար ընկերությունների ու սպառողների կողմից կատարված ծախսերի, ինչպես նաև մրցակցության վրա համակարգի անբարենպաստ ազդեցության ուսումնասիրություն և անհրաժեշտ փոփոխությունների իրականացման համար առաջարկությունների ներկայացում:

3) ՀՀ հարկային նոր օրենսգրքում փոփոխությունների և լրացումների կատարում՝

իրականացնել շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) համար գործող բնապահպանական հարկի դրույքաչափերի վերանայում՝ համապատասխանեցնելով դրանց չափերը գործածությունից դուրս գալուց հետո այդ արտադրանքի (ապրանքների) օգտահանման համար անհրաժեշտ ծախսերի մակարդակի հետ:

47. Այսպիսով, ԱՊԸ համակարգի ներդրմամբ՝

1) համագործակցության հանարավորություն կստեղծվի արտադրող (ներմուծող) և գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոն վերամշակող կազմակերպությունների միջև:

2) ստեղծել գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների հավաքագրման և վերամշակման համար տնտեսական գործունեության խթանման ավանդական տնտեսական մեխանիզմների կիրառման կատարելագործում,

3) թափոնների գործածության ոլորտում գործող պետական կարգավորման բնապահպանական գործիքների կատարելագործում,

4) գիտական հետազոտությունների ոլորտում նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ ուղղված գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) թափոնների որպես երկրորդային նյութական ռեսուրսների կիրառման հնարավորությունների ընդլայնմանը:

48. Սույն հայեցակարգի իրագործումը հնարավորության կտա Հայաստանում ներդնել «Գործածությունից դուրս եկած շրջակա միջավայրին վնաս պատճառող արտադրանքի (ապրանքների) գիտակից կառավարման համակարգ»: